կանգնել մեր պլազանց թիւր գաղափարներն և մեր ազգութեան սպառնացող վատ ունակութիւնքն։ Եւ առ ի ցուցանելոյ իմ սիրելի քերց թէ որպէս մեր նախնիք իւրեանց ազնուական վարքերով՝ խելացի կարգադրութիւններով համարուել են միշտ օտարազգիներից որպէս մի առաջնակարգ և հանճարամիտ ժողովուրդ Ասիական միւս ազգերի մէջ, արժան համարեցի թարգմանել ի Հայ բարբառ Պ. Սիրպիդ Գաղըիոյ արևելեան լեզուաց ճեմարանի, ականաւոր ուսուցչի, քաղուածն, որն կվերաբերի մեր հայրենիքին՝ մակագրութեամբս Memoire sur le gouvernement et la religion des anciens Armeniens, և յղել զայն Արարատայ Խմբագրութեան հրատարակելու խնդրանօք։

ՕՐԻՈՐԴ ՍՕՖԻԱ ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

Շնորհակալութիւն կը մատուցանեմք յիշեալ ուսումնասէր օրիորդին, և Արարատայ յառաջակայ թերթերէն սկսեալ կհրատարակեմք իւր զովելի թարգմանութիւնը։

---

## ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

### Ի ՆՊԱՍՏ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ.

### Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգևոր դպրոցաց առաքելով զհետևեալ անուանական ցուցակ երկսեռ բարերար Անդամոց իւրոց դրութեամբ քանակութեան նուիրեալ գումարաց իւրաքանչիւր անձի ի նպաստ մտաւոր և բարոյական զարգացման երկսեռ ուսանողաց, և զցուցակ նիւթաւոր ընծայից յընթացս ներկայ 1873 ամի, խոնարհաբար խնդրէ հրատարակել տպագրութեամբ յէջս Ամսագրոյդ Արարատայ յընդհանուր տեղեկութիւն բարենախանձ և ուսումնասէր Ազգայնոց։

| | Ր. |
|---|---|
| Ազնուական Յովակիմ Յովհաննէսեան Աբգարեանց | 15 |
| Մոսկովաբնակ Թադէոս Զաքարեան Համխարեանց | 50 |
| Գանձակեցի Ներսէս Տէր Ներսէսեանց | 15 |
| Եղիսաբէթ Կարապետեան Սերգէյեանց | 20 |
| Եղիսաբէթ Անդրէասեան Փռանգուլեանց | 10 |
| Կատարինէ Գէորգեան Թէլէթեանց | 10 |
| Կատարինէ Յարութիւնեան Կոստենցեանց | 20 |
| Կատարինէ Յակովբեան Կաղաչեանց | 20 |
| Ովաննա Փիլիպպոսեան Իւանեանց | 20 |
| Մարիամ Յովհաննէսեան Պօպովեանց | 20 |
| Ծաղիկ Յակովբեան Պօպովեանց | 20 |
| Եղիսաբէթ Յովհաննէսեան Հախվերտեանց | 20 |
| Հռիփսիմէ Մկրտչեան Սուրաբէկեանց | 20 |
| Մարգարիտ Գէորգեան Մաղաթեանց | 20 |
| Մարիամ Գէորգեան Եղեանց | 20 |
| Հռիփսիմէ Յովհաննէսեան Սարգսեանց | 20 |
| Կատարինէ Յովհաննէսեան Զանումեանց | 20 |
| Կատարինէ Մկրտչեան Պոպովեանց | 20 |
| Վառվառէ Պօղոսեան Տէր Սարգսեանց | 20 |
| Եղիսաբէթ Անդրէասեան Սափարեանց | 20 |
| Գումար | 250 |

### Նուիրեալ Նուէրք յանուն Դպրոցաց.

Յաստիճանաւորէ Խաչատրոյ Ահարոնեան Դադաշեանց՝ Նկարագիրք Սրբազան պատմութեանց հին և նոր Կտակարանի։

Յաստիճանաւորէ Յովհաննէ Կարապետեան Համազասպեանց՝ Նկարագիրք Հայկազեան Թագաւորաց և քաջազն Իշխանաց՝ 18 հատոր թարգմանութիւնք՝ արձակք և չափածոյք, ի Ռուսաց լեզուէ ի Հայ բարբառ, և 11 հատոր Նորատիպ մատեանք նկատողական ուսմանց։

Ի Զաւատ Ղազիեանցէ երկու հատ Հնդկացւոց անցքը անմարդաբնակ կղզիներում։

Ի Թեմական Ատենէ Հայոց Աստրախանայ՝ 14 Հրահանգ Հայերէն կարդալ և գրել ուսուցանելոյ, 37 թերթ խոշոր տառք, և 18 հատ Հայերէն Թուաբանութիւնք։

Ի Կատարինեայ Յովհաննէսեան Զանումեանց՝ մի հատ մեքենայ կարանի։

Յաստիճանաւորէ Ս. Պետերբուրգաբնակ Պարոն Միքայելէ Միանսարեանց՝ Վարժութիւնք կանոնաւոր և վայելուչ գրութեան։

Ի Տփխիսեցի Նիկողայոսէ Տէր-Յակոբեանց՝ մի օրինակ Ընթերցարան Հայոց լեզուի.

Եսայեան Պատրիարքէ Սրբոյ Երուսաղէմայ՝ հինգ օրինակ Համառօտութիւն Քրիստոնէական ուսման, մի մի օրինակ Թանգարան խրատու, Յովսէփ Գեղեցիկ, երկու օրինակ Պատմութիւն Սուրբ գրոց Հին և Նոր Կտակարանի, երկու օրինակ Քարոզութիւնք Սրբոյն Թադէի, հինգ օրինակ Քերականութիւն Հայոց, երեք օրինակ Հրահանգ սիրոյ, մի օրինակ Պատմութիւն կամ ուղղեցոյց սրբազան գիտելեաց. մի օրինակ Պատասխանիք Մխիթարայ Քահանայի Սեբաստացւոյ յաղագս համապատասխանութեան երկոտասան առաքելոց, մի մի օրինակ Համառօտ Ճարտասանութիւն, Պատմութիւն Յովհաննու Կաթողիկոսի, Կտակագիր հոգեշահ բանից, Մենաւոր մանկանց, Մատենագրութիւն նախնեաց, Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ և Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Պատրիարքի Ասորւոյ.

Հոգաբարձուք

Յովսէփ Աւագ Քահանայ Բունիաթեանց

Սիմէոն Պօպովեանց

Գրիգոր Սողոմոնեանց

Ի 10 Դեկտեմբերի 1873 ամի

Աստրախան.

Թ. 71

## Ի ՄՈԶԴՈԿԷ

Բարեկրօն Յովհաննէս Աւագ քահանայ Խոսրովեանց գրած է մեզ, զի անցեալ Յունիս ամսոյ ի 25-ն ի Մոզդոկ՝ տեղւոյն Գրիգորեան Հոգևոր դպրոցի հինգերորդ Տարեդարձը կատարելոյն առթիւ՝ նոյն դպրոցի հիմնադիր բարեյիշատակ Գրիգոր Ստեփանեան Թումայեանցի գերեզմանին վերայ Հոգեհանգստեան շքեղ հանդէս կատարած է, ուր ներկայ գտնուած է բազմախուռն ժողովուրդ. Յետոյ նոյն բազմութեամբ գնալով ի դպրոցն՝ Տարեդարձ կատարած են, ուր մի քանի բանախօսութիւնք ևս եղել են.

Յիշեալ Աւագ քահանայն կյաւելու հաղորդել, զի նոյն դպրոցի Հոգաբարձուք Մեծ. Պարոնայք Մակար Ուլուխանեանց, Յովհաննէս Թումայեանց, Յարութիւն Գեանջումեանց և Պօղոս Շրթեանց՝ իւրաքանչիւրն 500ական ռուբլի նպաստելով և երկու հազար մանէթ դրամագլուխ կազմելով ի Մոզդոկ մոմարանի գործարան հաստատել են, որոյ արդիւնքը պիտի յատկացնեն ի նպաստ Հոգևոր դպրոցին.

Շնորհակալութեան արժանի և գովելի այսպիսի մի նպատակ և ջանք ոչ սակաւ ուրախութիւն է.

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

Կ. Պոլսոյ Հայոց Ազգային Հիւանդանոցին յօգուտ և ի նպաստ բացուած մոմարանի և այս առթիւ Պատրիարքարանի կողմէն հրամայուած մի անօրէնութեան՝ այս ինքն նոյն մոմարանէն թէ եկեղեցեաց և թէ հարսանեաց և այլ հանդիսից կարևոր եղած մոմերը գնելոյ պատուիրանին ընդդէմ անվայելուչ կերպիւ բողոքած էր մի Պարոն, որոյ ի պատասխանի ուղղուած հետևեալ յօդուածին մէջ մեր Ազգայնոց ոմանց վերաբերեալ կարևոր պանծալի տեղեկութիւնք գտնուելով՝ մանաւանդ մեր Ազգայնոց ընդունակութեանց և յաջողակութեանց թարգման և նախանձախնդիր իղձեր լինելով՝ արժան կհամարիմք ամբողջութեամբ օրինակել աստէն և հաղորդել ընթերցողաց:

Թէ Եւրոպացի ուսումնարանաց հետ չունի՞ն մրցել Տաճկաստանի ուսումնարանք, և թէ ինչ է Տաճկաստանի ուսումնարանի յառաջադիմութեան խումբը:

Առ Գ. Մովսէսեան

Օրագրի 1044 թուով գրուած մ' ունիք, որ ձեռքս նոր անցաւ. մելանով ու տառերով կը ջգնիք հաստատել թէ Հիւանդանոցի Մոմարանը պիտի վնասէ, պարապ բան է անոր շարունակութեան աշխատիլ. պարապ բան է հրաւիրել